I-140

THE ARARAD,
An Armenian Journal
of
Politics, Science and Literature.
Published
Every Other Thursday,
by
P. M. Ayvad,
Editor and Proprietor,
No. 100 Centre Street, New York.

ԱՐԱՐԱՏ

ԵՐԿ-ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

TO ADVERTISERS.

This paper has an extensive circulation among the Armenians throughout the United States and the principal cities of the world. It is an excellent medium for domestic and international advertisements, securing the very best results.

Rates of advertising will be found on the fourth page.

— ՄԵՐ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԱԶԳԻՆ ՍԶԲՈՒՆՔՆ Է, ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։ — ԱՐԱՐԱՏ, Սեպտեմբեր 30, 1876։

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / ESTABLISHED AT CONSTANTINOPLE 1869. ՆԻՒ ԵՈՐՔ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՅՈՒՆՎԱՐ 1 / NEW YORK, THURSDAY, JANUARY 1 1891. ՆՈՐ ՀԱՏՈՐ Ա. ԹԻՒ / NEW VOLUME I. NO. 1

-ՀԻՄԱՅ ԳՐՈՒԵՑԷՔ-

ԱՐԱՐԱՏԻ ԲԱԺԱՆՈՐԴ

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԳՈՐԾԸ

ՎԱՂՈՒԱՆ ՄԻ՛ ԶԳԷՔ։

Լուրջ խորհրդածութիւններ, հետաքրքրական տեղեկութիւններ, թարմ եւ կարեւոր լուրեր. ասոնց ամէնքն ալ ճիշտ ժամանակին կ'ստանաք. ո՛չ ամիս մը հիննալէն ետքը և ո՛չ ալ պատահելէն ամիս մը առաջ։

— — ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ — —

Միացեալ Նահանգաց համար,
Մէկ տարեկան 2 տօլար,
Կէս » 1 »
Օտարերկիրներու համար,
Մէկ տարեկան 12 շիլին,
Կէս » 6 »։
(Բոլոր տուրքէ ազատ։)

Ցեխեցէ՛ք ԱՐԱՐԱՏը, եւ ԱՐԱՐԱՏ ալ զձեզ պիտի յիշէ։ Այժմէն բաժանորդ գրուելով է որ պիտի կարողանաք ԱՐԱՐԱՏը շաբաթաթերթի վերածել։ Գործակատարներ կ'ուզուին ամէն քաղաքաց մէջ։ Խմբագրութեան հասցէն թերթիս գլուխը պիտի տեսնէք։

ՎԱՂՈՒԱՆ ՄԻ՛ ԶԳԷՔ

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԳՈՐԾԸ

ԱՐԱՐԱՏԻ ԲԱԺԱՆՈՐԴ

-ՀԻՄԱՅ ԳՐՈՒԵՑԷՔ-

ՈՂՋՈՅՆ

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂԱՑ։

Նորէկ տարւոյս առաջին օրին հետ ԱՐԱՐԱՏ կուգայ անգամ մը ևս ըսելու իր սիրելեաց «ահաւասիկ եմ։» Մեր ընթերցողներէն շատերը անտարակոյս պիտի քննեն թէ ո՞վ է այս անակնկալ այցելուն՝ և շուտով պիտի գտնեն թէ ինչո՛ւ համար եկած է։ Բայց որովհետև 15 երկար տարիներ անցած են այն օրէն 'ի վեր երբ ԱՐԱՐԱՏի արդար ձայնը խեղդուեցաւ այն սխալ կարծեօք որնա ալ ևս չի պիտի կարողանայ խօսել և քարոզել ինչ որ ճշմարիտ, ինչ որ արդար է, և ինչ որ մարդկային ընկերական կենաց անհրաժեշտ իրաւունքն է, պատշաճ է որ այժմ թեթև ակնարկ մը նետեմք նորա անցելոյն և ապագային վրայ։

ԱՐԱՐԱՏ առաջին անգամ 1869 ին Կոստանդնուպոլսոյ մէջ հաստատուեցաւ։ Նորա արտօնատէր և խմբագիր հանդուցեալ Մատթէոս Մ. Այվազեանի ձեռամբ։ Աննման տեղական ուրիշ լրագրաց, ինչպէս բնականն էր իւր խմբագրին, իւր միակ [illegible] եղաւ ըսել սևին սև և ճերմակին ճերմակ, բարձրացնել ինչ որ ճշմարիտ է և հալածել ինչ որ անարդար, մեկդի թողելով այն ամեն շողոքորդութիւնք և մարդահաճութիւնք որոնցմով տեղւոյն մամուլը լի կը պահէր իւր էջերը, ինչպէս մինչև ցայսօր ալ ընել պարտաւորուած է, Բարձրագոյն կոչուած Դրան ցասման սարկայ չ'ըլլալու համար։

Ուրեմն կրնայ գուշակուիլ թէ ինչ բաղդ կ'սպասէր այսպիսի լրագրի մը այնպիսի երկրի մը մէջ և կառավարութեան մը ներքև որոյ հիմունքն եղած են ագիտութիւն, խաւար, անիրաւութիւն և բռնապետական միապետութիւն։ Իւր հաստատութեան թուականէն մինչև 1876 ԱՐԱՐԱՏ հրատարակուեցաւ գրեթէ ամէն տարուան մեծագոյն մասը Եպարքոսական հրամանաւ դադարմամբ անցունելով, այնպիսի պատճառներու համար որոց հրատարակիչք եթէ այդ սկզբունքները լուսաւորեալ աշխարհի մը մէջ քարոզէին փոխանակ պատժուելու պատւոյ և մեծարանաց պիտի արժանանային։

Բայց այս դադարմանց և հալածանաց ամենէն վերջինն և մահացուն հասաւ 1876 ին, որով ԱՐԱՐԱՏ չէ թէ միայն 'խպառ խափանեցաւ, այլ նորա խմբագիրն ալ առանց դատաստանի նմանը չի տեսնուած անգթութեամբ նոյն իսկ Մէհմէտ Րիւշտի կոչուած ճիւաղի մը հրամանին և տեսութեան ներքև ի մահ ծեծուեցաւ, անօրէն Թիկնապահներու ոտից տակ։ Եւ այս ալ ինչո՛ւ համար. որովհետև ԱՐԱՐԱՏ հրատարակած էր Տրապիզոնի մօտ Շտնա գիւղի մէջ Հայ քահանայի մը Հիւսէին հարիւրապետի մը կողմանէ յանիրաւի ծառի մը կապուելով և վրան ջուր թափուելով փայտերով ծեծուած և սոյն ծեծին հետևանքէն մահու մօտ հիւանդացած ըլլալուն լուրը, և այս տեսակ անգթութեանց վերջ տրուելուն համար կայսերական կառավարութեան ուշադրութիւնն խնդրած։

Մինչդեռ ԱՐԱՐԱՏ անմեղ Հայ քահանայի մը համար արդարութիւն կը խնդրէր, նորա խմբագիրն տեսաւ իւր անձին վրայ գործադրուիլն արդարութեան այնպիսի օրինակի մը որ միայն Թուրքէն կրնայ սպասուիլ։

Այս միջադէպին աւելի հետաքրքրական մէկ մասն ալ յիշած ըլլալու համար սա կ'աւելցնենք որ այն ատեն Եպարքոս Մէհմէտ Րիւշտի իւր գործած սրտաճմլիկ անգթութեան արդարացուցիչ փաստեր չինելու դիտմամբ Տրապիզոնի մէջ այդ ծեծուած Հայ քահանայի նկատմամբ հարցաքննութիւն մը հրամայեց որոյ ներկայ գտնուեցան նաև Հայրենիքի և Մէձմուայի Հաւատիսի խմբագիրք։

Եղելութիւնն այնչափ ինքնայայտ ճշմարտութիւն մ'էր որ մինչև իսկ տեղւոյն Իմամը, բարեսիրտ անձ մը ըլլալով, չի վարանեցաւ երդմամբ վկայել որ Հիւսէյին յիրաւի այդ գազանային անգթութիւնը գործած էր Հայ քահանային վրայ։

Ուրեմն այդ վկայութեանց զօրութեամբ [illegible] Պօլիս բերուեցաւ. բայց ինչ նպատակի համար ըլլալը երեք ամիս եաքը միայն կրցաւ ստուգուիլ, երբ իմացուեցաւ որ հարիւրապետ Հիւսէին հազարապետութեան պաշտօնով Կարնոյ նահանգը ղրկուած է որպէս զի ալ ևս Հայոց վրայ այդպիսի անգթութիւններ չի գործէ։

Ահա այսպէսով վերջացաւ ԱՐԱՐԱՏի կենաց ողբերգութեան վերջին ամենատխուր արարուածը, նահատակութեամբ իւր ազգասէր հաստատողին, որու մահուան սոյն սրտաճմլիկ պարագաները յարցուներս շարժեցին համայն ազգը, և որու ազգանուէր ծառայութեան և խղճալի մահուան հետևանք, Արքեպիսկոպոսունք, երջանկայիշատակ Ներսէս Պատրիարք, Խորէն Լուսինեան և Մատթէոս Իզմիրլեան միաբերան հռչակեցին զանի Նահատակ Վասն Սիրոյն Ազգին։

Թո՛ղ Մատթէոս Այվատեանի ոսկերք հանգչելու վրայ ըլլան ի Ս. Լուսաւորիչ եկեղեցին Ղալաթիոյ, բայց նորա ոգին տակաւին կենդանի է զինքն և իւր սկզբունքն ճանչցող ամէն Հայու սրտին մէջ։ Նա իւր ձայնն բարձրացուց ԱՐԱՐԱՏի միջոցաւ, հարստահարելոց օգնութեան, Հայաստանի վարչութեան բարւոքման, և անգութ և անողոք բռնաւորաց ջախջախման համար։ Այսօր մեք կուգամք միևնոյն եռանդով և միևնոյն սկզբունքով ծառայելու ազգին իբր նորա յաջորդ, և ի լրումն տանելու այն վսեմ գործը զոր նա 1869ին ըսկսաւ։ Մեզ զէնք ունենալով նոյն ինքն այն վսեմ գործիքը զոր նա ընտրած էր արդարութեան հալածիչներու դէմ. այդ գործիքն է ԱՐԱՐԱՏ։

Բայց նախախնամութեան հաճոյ երևցաւ այս անգամ ԱՐԱՐԱՏ հրատարակել նորհիւ աշխարհիս ամենէն ազատ երկրին մէջ գտնուելով այս անգամ, պիտի կարողանամք առաւել ևս աներկիւղ հրատարակել այն ամէն ճշմարտութիւնները, որոց վրայ խորհիլն անգամ մահացու մեղք պիտի ըլլար, և ինչպէս որ է, մեր ծընունդ առած երկրին մէջ։

Իւր այս քաղցր պարտականութեան հետ մեկտեղ թերթիս խմբագրութիւնն անտարբեր չի պիտի ըլլայ ԱՐԱՐԱՏի սիւնակներն օգտակար ընելու Ամերիկեան Հայգաղթականութեանց նկատմամբ։ ԱՐԱՐԱՏ ամենայն անկողմնակալութեամբ պիտի ծառայէ ժողովրդեան ատի ուր որ ալ գտնուի. պիտի ջատագովէ այն ամեն բարի ձեռնարկներ որք կ'ըլլան ընդհանուր ազգին և տեղւոյս Հայոց օգտին համար. պիտի աջակցի այն ամէն շարժմանց որք կ'ըլլան յանուն սիրոյ և միութեան. պիտի ջանայ տարածել ընթերցասիրութիւնն մեր ամէն կարգի ժողորդեան մէջ, տալով պատմական և ուսումնական տեղեկութիւններ, և ընդհանրացնելով մեր ազգի անցեալ և ներկայ պատմութիւնն և գրականութիւնն։ Պիտի թարգմանէ ժամանակէ ժամանակ Ամերիկեան հեղինակներու այն տեսակ գործեր որք բարոյական, ուսումնական և գիտական տեսակէտով օգտակար և հրահանգիչ կ'ըլլան մեր ազգայնոց. և վերջապէս չի պիտի խնայէ որևէ ջանք, յարատևութիւն և ծախք, ամեն կերպով իւր ընթերցողաց պիտանի և օգտակար թերթ մը ըլլալու համար։

Վերջապէս ահա ԱՐԱՐԱՏ իր բարեկամաց տասն և հինգ տարիներէ ի վեր յայտնած փափաքը կը լեցնէ ի լոյս ընծայուելով միևնոյն դիրքով և ուղղութեամբ ինչպէս որ էր ի վաղուց "իւր հաստատողին խմբագրութեան և վարչութեան ներքև։

Այժմ կը մնայ մեր ընթերցողաց գնահատել թերթիս խմբագրութեան սոյն ձեռնարկը և նախանձախնդիր ըլլալ նորա յառաջադիմութեան և զարգացման։

ՄԵՐ ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔԸ։

Նուիրական պարտականութիւն մ'է մեզ խորին շնորհակալութիւննիս յայտնել այն ազգայնոց որք սիրով և յօժարութեամբ ԱՐԱՐԱՏ ի հրատարակման համար հարկ եղած դրամական զօրութիւնը գոյացուցին, և ասանկով Միացեալ Նահանգաց Հայ գաղթականութեանց մէջ ի տի ղուց 'իվեր զգալի եղած պէտքը լեցուցին։

Այս և մեր սիրելի ընթերցողներէն թերթիս գտնելիք ընդունելութեան վրայ յենլով, կրնամք բաւական վստահութեամբ այժմէն խոստանալ որ ԱՐԱՐԱՏ քիչ ժամանակէն շաբաթաթերթի պիտի վերածուի առանց բաժանորդագնին փոփոխման։

Ուրեմն կը սիրեմք հաւատալ որ ԱՐԱՐԱՏ ի բարեկամները չի պիտի վարանին անյապաղ բաժանորդ գրուիլ և ասանկով թէ նորա յառաջացումը քաջալերել և թէ ազգային կարեւոր պէտք մը լեցնել։

ԱԶԴ

Եկեղեցական եւ գթութեան գործերու վերաբերեալ Հայերէն լեզուաւ ծանուցմունք որք երկու մատնաչափէ աւելի տեղ չեն բռներ, թերթիս մէջ ձրի պիտի հրատարակուին։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՈՒՂՂԱՓԱՌ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻ

St. Chrysostom's Chapel,
[Trinity Parish,]
Corner 39th Street and 7th Avenue.

Ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան կը ծանուցուի որ առաւօտեան ժամերգութիւն կը կատարուի ի վերոյիշեալ Մատրան, ամէն կիւրակէ ժամը 1. 30 ին յետ միջաւուր։

Ի Դիմաց Հոգաբարձութեան
Հ. ԷԿԻՆԵԱՆ, Քարտուղար. Փ. Մ. ԱՅՎԱՏ, Ատենապետ.

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ Ի ՆԻՒ ԵՈՐՔ։

Ընթերցող,
ՀՐԱՆՏ ՄԵՍՐՈՊ ՔԻՐԵՋՃԵԱՆ։

Ցառաջիկայ Կիրակի, ի ժամ 2, յետ միջաւուր, ի Կրէյս Մատրան (Պրոտուէյ և Տասներորդ փողոց) կրօնական Պաշտամունք պիտի կատարուի Հայ լեզուաւ, ըստ դրութեան Անգղիական Եկեղեցւոյն։

Ցարգանօք կը հրաւիրուին ամէն Հայք ներկայ գտնուիլ և մասնակցիլ սոյն պաշտաման։

ՆԵՐՍՈՆ ՄԵՍՐՈՊ ՊՈՅԱՃԵԱՆ
Քարտուղար։

ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍԻ ԱՆԳՂ. ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ց'Էփիփէնի Եկեղեցւոյ։

(47րդ Փողոց, Լէնքսինքթըն եւ Փարք Ավընիւներու մէջտեղ)։

Պաշտօնեայ — Սբր. Յովհաննէսեան. Դասախօսութիւնն կսկսի, յետ միջաւուր, ժամը 3ին, եւ կրօնական Պաշտամունքն՝ ժամը չորսին, կիւրակի օրեր։

ԱԶԴ

Նիւեորքի Հայաստանեայց Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնն պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան որ Եկեղեցական երաժշտութեան վարժութիւնք տեղի կունենան ամէն հինգշաբթի գիշեր ի ժամ 7. 30. Ս. Ոսկեբերան Մատրան սրահին մէջ, Ուէսթ 39 րդ Փողոցի և 7 րդ Ավընիւի անկիւն։ Սրահին դուռը 7 րդ Ավընիւի վրայ է։ Ամէն ազգայինք սիրով կը հրաւիրուին ներկայ գտնուիլ։

ԱՐԱՐԱՏ

Կը հրատարակուի երկու շաբաթը անգամ մը, Հինգշաբթի օրեր։

Խմբագիր եւ Տէր,
ՓԱՌՆԱԿ ՄԱՏԹԷՈՍ ԱՑՎԱՏԵԱՆ։

ՊԱՑԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ,
(Բոսթի տուրքէ ազատ։)
Միացեալ Նահանգաց համար,

Մէկ տարեկան	2 տոլար,
Կէս »	1 »

Օտար երկիրներու համար,

Մէկ տարեկան	12 շիլին,
Կէս «	6 »

Բաժանորդագրութիւնք կանխիկ վճարելի են։

Ուղղել ամեն գրութիւնք առ
The Ararad,
No. 100 Centre Street,
NEW YORK CITY.

1891

Այսօր քաղաքակրթեալ աշխարհի և զայն կազմող ամէն անհատներու կենաց պատմութեան մէջ նոր գլուխ մը ևս կը բացուի։ Տասնեւիններորդ դարուս վերջին նամանեկին անդրանիկ տարւոյն առաջին օրը հրճուանօք մեզ հրաւէր կը կարդայ քայլ մը ևս յառաջանալ մեր կենաց սահմանեալ ընթացքին մէջ, և կը բանայ մեր առջեւ այն ընդարձակ դաշտը ուր պիտի քաղեմք ինչ որ սերմանեցինք անցելոյն մէջ, և սերմանեմք ինչ որ պիտի ուզեմք քաղել ապագային մէջ։ Իւրաքանչիւր տարւոյ այս առաջին օրնամէնէն յարմարագոյն ժամանակն է ամէնուս համար ի հաշիւ առնելու մեր անցեալ արարքը և ապագայ ընելիքը մեր անձանց և մեր եղբարց նկատմամբ։ Նախ պէտք է հարցնեմք ինքզինքներնուս թէ ինչ բարի գործեր ըրինք Քրիստոնէութեան անցեալ տարեշրջանին մէջ, և համառօտ քաղուած մը ընելէ ետեւ պէտք է սերտեմք թէ ինչ բարի գործեր կրնամք ընել յաջորդ տարեշրջանին մէջ, և հաստատամտութեամբ որոշեմք զանոնք կատարելու։

Վայրկեան մը մեր ուշադրութիւն Միացեալ Նահանգաց Հայ գաղթականութեանց վրայ դարձնելով, կը խրախուսուիմք տեսնելով որ անցեալ 1890 տարին յաջողութեան և զարգացման տարի մը եղած է։

Նիւ Եօրք քաղաքին մէջ Հայութիւնն այսօր առաւել ընկերական և կազմակերպեալ վիճակի մէջ է քան թէ էր ասկէ մէկ կամ աւելի տարիներ առաջ։

Հայկական Միութիւն, Միացեալ Նահանգաց մէջ Հայ ընկերականութեան նախահայրը, օր ըստ օրէ զարգանալու և յետզհետէ ինքզինքը տեղւոյս Ժողովրդեան և ազգին օգտակար դրրից մէջ դնելու վրայ կը գտնուի։ Միւս կողմէն ընդհանուր գաղթականութիւնն ի մի կը ձուլուի, մեր սիրելի ազգին և նորա սիրոյն համար չարչարուողներուն իրենց ներկայ տառապանաց մէջ սփոփանք մը ըլլալու համար։

Ունինք նա և Նիւ Եօրք քաղաքին մէջ հաստատեալ Հայաստանեայց Եկեղեցի մը, իշնորհս Ջանից ազգային պատւոյ նախանձախնդիր ազգայնոց, և մարդասիրութեան Եպիսկոպոսական Եկեղեցւոյ դլուխ Պիշըբ Բոդդըրի։ ուր արդէն Հայք իրենց վաղեմի բարեպաշտութեան և Քրիստոնէութեան նոր ապացոյցներ տալու վրայ կը գտնուին, ամէն կիւրակէ հաւաքուելով և ինչպէս իւրեանց ազգայնութեան և նոյնպէս Եկեղեցւոյ սէրը իրենց սրտի մէջ վառ պահելով։

Նաև դարձեալ ի շնորհս նոյն Եպիսկոպոսին վերջի տարւոյս մէջ Հայերեն լեզուաւ Եպիսկոպոսական Եկեղեցւոյ արարողութիւնք հաստատուած են քաղաքիս մէջ, նոյն Եկեղեցւոյ հետեւորդ ազգայնոց կրօնական միխիթարութեանը համար։

Իսկ պահ մը ուշադրութիւնս Նահանգէս դուրս դարձնելով առաւել ևս կը քաջալերուիմք տեսնելով Մասչիւսէցի Ուսթրը քաղքին մէջ կանգնուած հոյակապ Հայաստանեայց Եկեղեցի մը, նոյն իսկ Հայ Ժողովրդեան սեփականութիւնն ըլլալով։ Անհաւասիկ Հայկայկոն հաստատամտութեան և բարեպաշտութեան կենդանի օրինակ մը որ կը կենայ տեղւոյն 500 ի չափ ազգայնոց, և Նահանգաց Հովիւ Արժ. Ց. Ծ. Վ. Սարաճեանի բազմարդիւն ջանից իրը անոերկրայելի ապացոյց։

Գործ մը՝ որ Ամերիկեան Հայութեան ատմութեան մէջ կարեւոր էջ մը կը լեցնէ, և յիրաւի պէտք է լաւ գնահատուի ամբողջ ազգին կողմանէ։

Յիշելու արժանի է նաև յիշեալ քաղքին մէջ գտնուած Հայկական Կաճառ անուն միութիւնը որ սիրոյ և միութեան նախանձելի օրինակ մը կրնայ հանդիսանալ ամէն Հայ գաղթականութենց։

Իսկ Պոսթոնի, Ֆիլատէլֆիոյ և Արեւմտեան ուրիշ քաղաքաց ինչպէս նաև Մետրապոլիս մէջ Հայ վաճառականութիւնն ալ համեմատաբար զարգանալու վրայ կը գտնուի։ Վերջին տարւոյս մէջ դրեթէ ուրիշ ամէն տարիներէ աւելի Ադլանտեան եզերաց ինչպէս նաև Արեւմտեան քաղաքաց մէջ Հայազգի վաճառատուններն պատկառելի թիւ մը կազմած են, և տարակոյս չեմք կրնար ունենալ որ քիչ ժամանակէն Հայ վաճառականութիւնը նոր աշխարհի մէջ ալ կարեւոր դիրք մը պիտի բռնէ։

Գալիֆօռնիոյ մէջ գտնուող մեր ազգակիցներն ալ կարեւոր յիշատակութեան արժանի են։ Սոցա շնորհիւն է որ մեկ քանի տարիներէ իվեր Միացեալ Նահանգաց ժողովուրդը պատուական խաղող կարողացած են ճաշակել և նոցա այգեպանութեան արդեամբ է որ ընտիր տեսակ գինիներ կը շինուին այժմ, որոցմով մինչեւ իսկ Եւրոպական սոյն կարեւոր ներածութեան մրցումն կ'սպառնացուի։

Վերջապէս յայտնի կ'երեւի թէ անցեալ տարւոյ մէջ Ամերիկեան Հայ գաղթականութիւններն կարեւոր յառաջադիմութիւն ըրած են զանազան ճիւղերու մէջ ազգային և անձնական տեսակէտով։ և յուսով եմք որ նոյնպէս և աւելի յաջողութեամբ պիտի շարունակեն նորեկ տարւոյս մէջ, և ասանկով կարող ըլլան թէ անհատաբար երջանիկ՝ և թէ հաւաքաբար բարոյապէս և նիւթապէս օգտակար ըլլալ մեր ներկայ տառապեալ հայրենեաց։

ԱՐԱՐԱՏ շնորհաւոր նոր Տարի կը մաղթէ ի սրտէ իւր բարեկամաց, ընթերցողաց և առհասարակ Հայ ժողովրդեան, և կը բաղձայ տեսնել 1891 տարին Հայաստանի փրկութեան, և Հայ ազգի յառաջադիմութեան ոսկետարին։

ԹՐՔԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼՔ։

Անտարակոյս մեր ընթերցողներ գիտեն Դումգափուի դէպքը և նորա հետեւանք եղած ձերբակալութեանց մանրամասնութիւնները։ Այժմ օրըստօրէ տեղեկանալու վրայ եմք սոյն ձերբակալեալներուն իրը թէ դատուելով մահու կամ զանազան բեդդերու կամ անապատներու մէջ աքսորման դատարտուիլն։ Աւելորդ է երկարաբանել թէ այդ անձինք յիրաւի յանցանք գործած է՞ին թէ ո՛չ։ զի այդ կէտն ալ բաւական պարզուած է ի շնորհս Եւրոպական մամլոյն խորաքննին հետազօտութեանց և հաստատուած է որ այդ շարժմանն նպատակն ուրիշ բան չէր բայց եթէ Կ. Պոլսոյ Պատրիարքին առաջնորդութեամբ դիմում մը ընել Սուլթանին և Հայաստանի ժողովրդեան ներկայ անտանելի տառապանաց դարմանին փութացումն աղերսել։

Ամենապարզ ժողովրդական շարժում մը, որ շատ սովորական է քաղաքակրեալ աշխարհի մէջ։ և մինչեւ իսկ Դաղղիոյ, Անգղիոյ և Միացեալ Նահանգաց պէս ժողովրդեան կամք յարգող երկիրներու մէջ ոստիկանութիւնն պարտական կ'ըլլայ այդպիսի բարենպատա և խաղաղասիրական շարժման մը անվրդով գործադրութեան համար հարկ եղած պաշտպանութիւնն ընել։ Բայց ինչպէս բնական է Թրքաց, այդպէս չ'եղաւ Դումգաբուի մէջ։ այլ ոստիկանութիւնն ըստ իւր վաղեմի սովորութեան զինու զօրութեամբ ժողովրդեան վրայ յարձակեցաւ առանց մինչև իսկ գիտնալու թէ ինչ էր այդ ժողովրդեան նպատակը, և ինչ էր իրենց արդիլել ուզած բանը։ և անտարակոյս ժողովրդեան մէջ ինքնապաշտպանութեան համար զէնք կրողներն ալ պարտաւորեցան զանոնք գործածել իրենց վրայ յարձակողներուն դէմ։

Հիմայ մեր նպատակը քննադատել չէ թէ յիրաւի այդ տեսակ շարժման մը տեղի կա՞ր և թէ այդ շարժման գլուխն գտնուողներն իրաւացի պատճառ մը ունէի՞ն այդպիսի շարժում մը ընելու թէ ոչ։

Բայց կարճ խօսքով ապացուցանելու համար թէ Թուրքիա եդեմական դրախտ չէ, և ժողովուրդը միշտ ունի յաւեր զրոս կը պարտաւորի իւր տիրող կառավարութեան ուշադրութեան ներել, երբ նա անգիտանայ նոցա բարձման կենսական պէտքը, աստ թող ներուի մեզ մէջբերել, նոյն ինքն Սուլթան Համիտի սա խօսքերն որ ըստ իւր գահակալութեան հրովարտակի միջոցաւ, թէ

«Երկրին քաշած բոլոր թշուառութիւնը ըստ քմաց Կառավարութեան (ԻՏԱՐԷԻ ՔԷՏՓԻԷ) ի երեսէն է» և թէ «բոլոր նախարարաց առաջին ջանքն պէտք է ըլլայ այս (ԻՏԱՐԷԻ ՔԷՏՓԻԷ) ին վերջ տալ։»

Ըսելէ կայ եղեր թշուառութիւն Թուրքիոյ ժողովրդեան մէջ, և եթէ այն օր կար այսօր ալ կայ, զի Թրքական վարչութեան ձեւն այն օրէն մինչև ցայսօր մազի չափ փոխուած չէ և եթէ երբէք, այն ալ դէպի վատթարագոյնն։

Ուրեմն, երբ մաս մը ժողովուրդ ըսել ուզէ թէ «թշուառութիւն կայ ժողովրդեան մէջ» զանոնք մահով պատժել, և երբ նոյն ժողովուրդն վարելու պաշտօն ունեցող մարմնոյն գլխաւորն ըսէ թէ «թշուառութիւն կայ ժողովրդեան մէջ» անպատիժ մնալ, ինչ տեսակ արդարութիւն ըլլալը չ'եմք կրնար հասկնալ և չ'եմք հաւատար որ ոևէ իրաւագիտական հանճար կարենայ լուծել սոյն հանելուկը։

Անցնիմք այս կէտն ալ։

Կառավարութիւնն կը ձերբակալէ ըստ քմաց հարիւրաւոր Հայեր, կարծելով թէ այդ անձանց վրայ կասկած կրնայ ըլլալ իրը յեղափոխական գործիչներ, առանց երդուեալ ապացոյցի (warrant, վասն զի հասարակաց իրաւանց այդ տեսակ յարգանքներ սովորական չեն Դրան Կառավարութեան։ բայց յետոյ, այդ դժբաղդներուն ճակատագիրն կը մնայ զանոնք դատելու պաշտօն ունեցող Թուրք դատաւորին շրթանց մէջ։ և այդ ալ միայն մէկ ճակատագիր որ է մահ կամ աքսոր։

Եւ ո՞վ է այդ դատաւորը որ արդարութեամբ և անաչառութեամբ դատէ՞ և պիտի դատէ սոյն կարծեցեալ յանցաւորները։ օտարական չէ։ աշխարհ կը ճանչնայ զանի։ այս այն արդարասէր դատաւորն է որ եղեռնագործ Մուսան դատեց առաջին անգամ և զանի իրը անսեղ արձակեց, ի փառս և ի պարծանս Օսմանեան կայսրութեան։ Այո՛ լոկ կասկածանօք ձերբակալուելով դատուիլ այնպիսի դատաւորի մը առջև որու սրտին մէջ արդարութեան ամենապզտիկ նշոյլն անգամ չի գտնուիլը իւր գործերովն ապացուցուած է։

Իրաց այս վիճակին մէջ, պատշաճ չէ՞ որ Պերլինի դաշնագիրն ստորագրող Տէրութիւնք իրենց կոստանդնուպօլսոյ մէջ ունեցած ներկայացուցիչներուն միջոցաւ աչք մը պահեն այս տեսակ յանցանաց համար կատարուած դատաստաններուն վրայ։ քանի որ այս ամէն աղէտից յիշեալ դաշնագրին 61երդ յօդուածի չի գործադրուելէն յառաջ եկած են։ Այս մասին առաջին պարտականութիւնն Անգղիոյ է, որ կրկին խոստումն առած է Սուլթանի Կառավարութենէն այդ բարեկարգութեանց առանց յապաղման Հայաբնակ Գաւառաց մէջ մտցուելուն համար։

Թագուհւոյն Կառավարութիւնը իւր ներկայ ընթացքովը կրկին և կրկին պատասխանատու կը մնայ աշխարհի առջև թողելով կատարուիլ՝ կրկնակի ոճիրներ Քրիստոնեայ ժողովրդի մը վրայ, որոց ինդրածը և փնտռածը ուրիշ բան չէ բայց եթէ «կենաց պատւոյ և ընչից ապահովութիւն» ա՛յն հողին վրայ որ իբր քառասուն և չորս դարերէ ի վեր իւրեանց Հայրենիքն և մարդկութեան օրօրանն եղած է։

ԲՐՕՖԷՍՕՐ ՄԻՆԱՍ ԶԷՐԱԶ։

Լօնտոնի Լ'Արմէնի թերթին մէջ բերկրութեամբ ընթերցանք թէ այդ թերթի խմբագիր, Պ. Մինաս Զերազ Քինկս Գոլէճի մէջ Հայերէն լեզուի և գրականութեան Ուսուցչապետութեան պաշտօնի ընտրուած է, նոյն Գոլէճի Հոգաբարձութեան կողմանէ։

Այս ընտրութեամբ Բրօֆ. Մինաս Զէրազ Անգղիոյ մէջ Հայերէնի Ուսուցչութեան առաջին աթոռը կը լեցնէ։ Մեր յարգոյ պաշտօնակցին իւր այս ընտրութեան համար մեր անկեղծ և ջերմբարեմաղթութիւնները յայտնելով հանդերձ, կը փութամք աւելցնել, թէ յիշեալ Գոլէճի Հոգաբարձութեան սոյն արարքը կրկնակի գնահատութեան արժանի է ամբողջ ազգին կողմանէ։ առաջին, Հայերէն ուսուցումն սոյն մեծահամբաւ Գոլէճի մէջ մտցուիլն որով Հայ լեզուն, գրականութիւնն և պատմութիւնն ըստ արժանւոյն կը տպաւորուին Անգղիացի Արեւելեան աշակերտաց վրայ։ երկրորդ, յիշեալ Հոգաբարձութեան պարն. Մինաս Զէրազ այդ պաշտօնէն ընտրելն, որով արժանաւոր անձն իրեն արժանի տեղը դրած եղան։

Վստահ եմք որ Բրօֆ. Զէրազ իւր Ուսուցչապետութեան պաշտօնը այնչափ յաջողութեամբ պիտի լեցնէ իւր գրական և լեզուագիտական տաղանդովը, որչափ որ իւր առ ազգն ստանձնած կարեւոր դերը իւր հայրենասիրաձան զգացմամբ և դիւանագիտական ընդունակութեամբ և փորձառութեամբ կարողացած է լեցնել։

Գրագէտ, Լեզուագէտ, Դիւանագէտ, Հայրենասէր, Ուսուցչապետ և Ծառայ Ազգին։ գանձ մը՝ որուն արժէքը Հայ ազգը չիպիտի մոռանայ։ և չեմք վարանիր հաւատալու որ ինչպէս Բրօֆ. Զերազի Նըման ազնիւ անձանուրութիւն մը իւր առ ազգն ունեցած սիրոյ պարտականութեանց մէջ անթերի կը գտնուի, տալով իւր տաղանդն և ժամանակն, նոյնպէս և ազգը թերի չի պիտի գտնուի իւր առ այն և նորա նմաններն ունեցած պարտականութեան ցմէջ։

ՄՐ. Հ. Ն. ՊԱՐՆԸՄ ԵՒ ՀԱՅ ԱԶԸ

Ուրիշ սիւնակի մը մէջ մեր ընթերցողները պիտի կարդան Նիու Եօրքի Հայ Գաղթականութեան մի ժողովիկ յիշեալ պատուելիի Պօսթընի Գօնկրիկեշընալիսդ թերթի մէջ գրած մի յօդուածին ի պատասխան անցուցած կծու պրոշումները

Մեր նպատակը հրոյն վրայ ձէթ աւելցնել չէ, բայց հասարակաց իրաւանց իրը ջերմ և անկեղծ պաշտպան, և Հայ Ազգին պատուոյն և արժանաւորութեան նախանձախնդիր թերթ մը, չեմք կրնար այսպիսի փափուկ կէտ մը բոլորովին լռելեայն անցնել։

Չեմք հասկնար թէ այս կամ այն անձինք, որք հեթանոսաց քրիստոնէութիւն քարոզելու համար Թուրքիա կը խրկուին ինչու իրենց ճիշդ պաշտօնին չի ծառայելով արդէն Քրիստոնեայ ժողովրդեան մը մէջ կրօնական երկպառակութիւններ կը սերմանեն և ալ աւելին երբեմն ալ նոցա արդէն անտանելի քաղաքական կենաց վրայ անհիմն և վշտացուցիչ հրատարակութիւններ ընելով զանոնք Քրիստոնեայ աշխարհի առջեւ սխալ ներկայացնելու կը ճգնին։ Յիսուն տարիներէ ի վեր մեծաքանակ գումարներ ծախսուած են Միացեալ Նահանգ ժողովրդեան կողմանէ Թուրքիոյ մէջ Աւետարանը քարոզելու գործին համար։ Եւ եթէ չեմք սխալիր այս դրամը ճիշդ սա նպատակաւ կը ծախսուի որ ոչ-Քրիստոնեայ ժողովուրդք ուսուցուին Տէրոջը խօսքը և այդպէսով աշխարհք լուսաւորուի մեր Տերոջը կամքին համաձայն։ Արդեօք այս նպատակին որչափը կատարած են Թուրքիա ղրկուած միսիոնարք։ Բանի Թուրք, Քիւրտ, Ղըզըլ Պաշ, Եէզիտի, Չէրքէզ և այլն, քրիստոնէութեան լուսոյ շաւղին մէջ դրուած են մեր միսիոնար եղբարց ձեռամբ։

Գիտնալու արժանի հետաքրքրական բան մէ այս։ Մեք միայն ապշափը կ'ըսեմք որ եթէ մեր միսիոնար եղբայրները իրենց այս բուն պաշտօնին մէկ տասներորդը կատարած ըլլային, այն ատեն յիրաւի Հայ ժողովրդեան օգուտ մը ըրած կըլլային, գոնէ նոցա բոլորութիւնը գտնուող սոյն արիւն. արբու ցեղերուն մէկ մասը քրիստոնէացնելով և զանոնք Հայոց բարեկամ դարձնելով։

Իսկ այժմ ոչինչ։ բացի գաւառներու մէջ նոցա ձեռամբ բացուած մի քանի վարժարաններէն, որք անտարակոյս առաւել ևս դաստիարակութեան նպատակին պիտի ծառայէին, եթէ Մ. Նահանգաց ժողովուրդը կամ նորա ներկայացուցիչները այդ գործը նոյն ինքն Հայոց կեդրոնական Վարչութեան ձեռամբ կատարէին։

Մր. Պարնըմի օգնութեան համար բարձրացուցած աղաղակէն կը դուշակեմք թէ Ամերիկայի ժողովուրդը ալ ևս սխալ մեկնութեանց զոհ երթալէ ձանձրացեր է, և թերևս առաջնոյն չափ դրամ հասցունելու վրայ չէ Թուրքիոյ մսիսիոնարաց չի կատարած գործին համար։ Եւ բընական է որ այդպէս եղած ըլլայ, քանի որ թէ Ամերիկեան ազգը և թէ Եւրոպական ազգեր օր ըստ օրէ աւելի մօտէն ճանչելու վրայ են զՀայ ժողովուրդը։

Եթէ Թուրքիոյ մէջ յաջողութիւն գտած չեն Պարոն Պարնըմ և իւր նմաններ թող չի վհատին։ իրենց աւելի յարմար նոր դաշտ մը բացուած է այժմ, Ամենաբարձր Ափրիկէի Գոնկո Նահանգին մէջ, ուր յիրաւի գործ կայ բայց գործող չի կայ։

ՈՐ ՈՒՆԻՑԻ ԱԿԱՆՋՍ ԼՍԵԼՈՑ, ԼՈՒԻՑԷ։

ՄՐ. ԿԼԱՏՍԹՐԸՆ ԿԸ ԽՕՍԻ։

Բրիտանական Բարլամէնդի բացման առթիւ Թագուհւոյն ճառին ի պատասխան Մր. Կըլատսթրն իւր երկար ատենախօսութեան մէջ Թրքական գործոց մասին սա հետաքրքիր խօսքերը ըրած է, որք յիրաւի կը ցուցնեն թէ Անգլիոյ մեծ ծերունին օրչափ ճշդութեամբ կշռած է Թրքական կառավարութիւն կոչուած վատթար կազմակերպութեան յոռի ձիրքերը։

«Ցաւ պատճառող տեսակէն ուրիշ՝ խնդիր մ'ալ կայ որնոր լռութեամբ անցնելու անկարող կըզգամ. թէպէտ զանի կառավարութեան գործոց վրայ սանձման նիւթ ընելու դիտաւորութիւն մը չունիմ։ Չեմ ըսեր որ նոցա պարտականութիւնն էր Գահուն Ճառին մէջ այս առթիւ մտցնել Թրքական Կայսրութեան զանազան մասանց մէջ կատարուած ողբալի արարքները, որք ժամանակէ ի ժամանակ, կամ առաւելաս, կարճ ժամանակամիջոցներու մէջ, մեր ուշադրութեան առարկայ կ'ըլլան։

Բայց այս դէպքերը խորին տրպաւորութիւն մը կ'ընեն այս երկրին ժողովրդեան սրտին, եւ մտքին վրայ, և ճշմարիտ իրաւ է —այժմ չեմ ըսեր պաշտօնէից համար— բայց ճշմարիտ իրաւ է Բարլամէնդի անկախ անդամոց համար որ խօսին ատոնց վրայ այնպիսի կերպով մը, որով Օսմանեան Կառավարութիւնը համոզուի թէ՝ եթէ երբէք այդ կառավարութիւնը որևէ արժէք մը կը դնէ այս երկրին բարոյական աջակցութեան և համակրութեան վրայ, պարտ է որ մին չև հիմայ ցուցուցածէն աւելի հոգատանի այս երկրին ժողովուրդը համոզելու համար թէ՝ այդ համակրութիւնը, եթէ չնորհուի, պարապ տեղը չնորհուած չի պիտի ըլլայ։

«Իմ տեսութիւնս կը սահմանափակեմ, ջերմ փափաք մը յայտնելով որ Կառավարութիւնը իւր Եւրոպիոյ մէջ ունեցած արդարացի ազդեցութեան չնորհիւ, իրեն ներկայանալիք որևէ պատեհութիւն չի պիտի փոխցունէ, կամ իրաց ճիշդ վիճակը Օսմանեան Կայսրութեան ներկայացնելով, և կամ գոյացնել ջանալով, եթէ պէտք ըլլայ ինչպէս այս երկրին նոյնպէս և ուրիշ Տէրութեանցազդեցութեամբ, այդ կառավարութեան մոտց վրայ տեսակ մը տպաւորութիւն որ կարենայ յառաջ բերել իրաց լաւագոյն վիճակ մը, եւ ջնջել այդ ապերջանիկ հաւատքը որ կարծեմ թէ Անգլիոյ ժողովուրդը ցաւալի փորձառութեամբ ինքզինքին ստիպուած կը գտնեն խորհելու, թէ Դրան իւր ժողովրդեան նկատմամբ ըրած վերացական խոստումներն եւ յայտարարութիւններն ճշմարտիւ որեւ է արժէք չունին, եւ թէ ոչ այլ ինչ բայց եթէ դրական եւ որոշակի գործեր միայն կրնան յաջողիլ այս ազգին մտաց մէջ ներշնչելու Օսմանեան Վարչութեան այդ երկիրներուն մէջ շարունակութեան որ ևէ արժէք կցելու փափաք կամ ընդմիտում։ (կեցցէ՛։) վստահ եմ որ այդ Կառավարութեան անբարեկամական ըլլալու դիտաւորութիւն մը չիկայ։ բայց կարծեմ այս երկրի ժողովրդեան փափաքն է որ այդ Կառավարութիւնը իւր վարչութեան առարկայ եղող ժողովրդեան տանելի ըլլալու ձեւին մէջ դրուի։ այնպէս որ ինքն իրմէն իւր տեւականութեան ապացոյց մը կարենայ տալ և զերծ ըլլայ այն բաներէն որք Եւրոպիոյ խիղճը կը վրդովեն։ Շատ բան չեմ պահանջեր Կառավարութենէն, բայց կը խորհիմ թէ նորա համար կարելի է հաւաստել իրեն համակրութեան առարկայ եղող երկիրը թէ բարւոք վարչութեան պէտք կայ։ և ողբալ որ այդ բանը չիկայ։ Ադիէ անդին չեմ երթար։ Կ'զգամ որ զօրաւոր առարկութիւն կայ այնպիսի սպառնալեաց դէմ որոց կատարումը հաւանական չէ, և արժանապատուութեան կորուստ կայ մշտնջենաբար համոզիչ ներկայացումներ ընելու մէջ այնպիսի Տէրութեան մը որ զանոնք իրը սաչափ ունայն թղթեր կամ վատնեած շունչ կընկատէ։ Ուրեմն փափաքելի է որ հասկցուի թէ այս երկրին մէջ զօրաւոր զգացում մը կը տիրէ այն պատգամներուն նկատմամբ, որք ժամանակէ ժամանակ մեր ուշադրութեան կը բերուին։

ԳԱՆԴԸՐՊԸՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՎՐԱՅ, ԵՒ ՄԱՆՉԵՍԹԸՐԻ ՄԻԹԻՆԿԸ։

Երեւելի վճառականներու, սեղանաւորներու և շատ մը ուրիշ քաղաքացիներու մատուցած մի խնդրագրին համաձայն Մանչէսթրի Քաղաքապետն Նոյ. 2ին մեծ ժողով կոչած էր Հայկական խնդիրն նկատողութեան առնելու համար։ Ներկայութիւնն մեծ էր։ Այս ժողովին մէջ որոշուեցաւ, թէ Հայաստանի բարւոք վարչութիւնը և դորա ամէն քաղաքացւոց պաշտպանութիւնը խիստ փափաքելի է։ թէ սոյն Նահանգը պէտք է Դրան կողմանէ անուտնեալ և Եւրոպական Տերութեանց կողմանէ հաւաքեալ Ընդհանուր Կառավարչով մը կառավարուի։ Առ յանձնախումբն ուղղեալ, սոյն ժողովոյն նպատակին վրայ համակրութիւն ցուցնող նամակներուն մէջ կար հատ մը Գանդըրպըրիի Արքեպիսկոպոսէն, որու մէջ ըսած էր։ «Կը խնդրեմ Ձեզնէ յայտնել ամէն ներկայ գտնուողներուն, իմ խորին շահս այն ամէն բաներուն մէջ որք Հին Հայաստանեայց Եկեղեցւոյ լաւութեան հետ գործառնութիւն ունին։ եւ այն ամէն շարժմանց մէջ որք արդար եւ իմաստուն միջոցներով նորա ապահովութիւնը եւ ամրութիւնը կը յառաջացնեն։» Արկայլի Դուքսը գրած էր։ «Անկեղծ համակրութիւն մը ունիմ ձեր ժողովին նպատակին վերայ։ Թէպէտև Հայաստանի Քրիստոնեայ ժողովրդեան վիճակին վրայ որևէ վաւերական կամ մանրամասն տեղեկութիւն մը չունիմ, բայց ամենախորին համոզում մը ունիմ թէ բոլորովին անյոյս բան է ակնկալել որ Դուռը երբէք քաջաքակրթեալ կառավարութեան մը պարտականութիւններն պիտի կատարէ Թրքական կայսրութեան այդ մասանց մէջ։ Թրքական վարչութիւնը թէ պիղծ և թէ տկար է, և այդպէս պիտի ըլլայ մինչև որ վերջը գայ։» Լօրտ Հարթինկթընէն նամակ մը կար որու մէջ կ'ըսէր։ «Կը յուսամ որ ժողովնիդ յաջող ժողով մը ըլլայ, և Կառավարութեան ձեռքերը զօրացնէ, Պէրլինի Դաշնագրին գործադրութիւնը ձեռք բերելու և Հայաստանի ժողովրդեան վիճակը բարւոքելու համար, նորա ըրած ջանիցը մէջ։» Նման իմաստներով գրուած նամակներ ևս ուղղուած էին Լօրտ Սէլսբրի, Մր. Ֆ. Ա. Զանէնկ, Մ. Բ., Մր. Լէվիզընկաուըր, Մ. Բ., և Մր. Է. Ա. Ֆըրիմէն։

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՔԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Լօնտրնի Տէյլի Նիուզէն քաղուած։

Կարնոյ Ոստիկանապետը անձամբ կը շրջագայի նահանգին մէջ տուրք հաւաքելու համար, և ով որ իւր պահանջմանցը չի պատասխանէ և կամ դրամը ամբողջ չի վճարէ, կը պարտաւորի իւր ընչից վճառման հանդիսատես ըլլալ։ Ասոր իրր հետեւանք կենդանեաց և ուրիշ բաներու գիներ սարսափելի կերպով իջած են։ Եզ մը կը ծախուի 75 ղրշ. ի և ոչխար մը 10 ղրշ. ի։ Սեբաստիոյ Ոստիկանութեան գործակատարները ամէն օր պանդոկները կը խուզարկեն և Հայ այցելուները կը ձերբակալեն։ և միայն դոցա ամէն ստացուածքը կողոպտելէ ետքանոնք թոյլ կուտան։ Սոյնպիսի հարստահարութիւն մը վերջի օրերս գործադրուեցաւ նաև երկու Հայոց վրայ, որք Ամերիկայէ նոր դարձած էին։ Խեղճերուն երկար տարիներու անխոնջ աշխատանաց արդիւնքը անյագուրդ կողոպտիչներու ձեռքն անցնելէն ետքը միայն կրցան ազատիլ։

Վերջերս Սեբաստիոյ Տօնավաճառին մէջ երկայն դաշոյններով զինեալ խել մը Թրքեր, քանի մը Հայ երիտասարդներու վրայ յարձակեցան և զանոնք չարաչար վիրաւորեցին։ Վիրաւորեալ երիտասարդաց ծնողքը Կառավարութենէն արդարութեան գործադրութիւն խնդրեցին, բայց չէ թէ միայն իրենց աղերսանքը մտիկ չ'ըլլուեցաւ, այլ և ծնողաց մէկ քանին ի բանտ նետուեցան։

Ղազի կոչուած գիւղին մէջ երեք Թրքեր ջաղացքի մը դուռը կոտրելով ներս մտան և ջաղացպանը սպաննեցին։ Ջաղացպանին օգնականը փախչելու բարեբաղդութիւնը ունեցաւ, և խնդիրը կառավարութեան տեղեկացուց։ Բայց սա, ըստ սովորականին մարդասպանները ևատժելու միջոց մը ձեռք չ'առաւ։ Մկրտիչ անուն Հայ մը վերջերս Թրքերէ յարձակուեցաւ, որք նորա քիթը։ ականջները և մատները կտրեցին։ Աւելորդ է կրկնել որ Կառավարութիւնը ասոր ալ ուշադրութիւն չ'ընրաւ։ Գիւղօրէից մէջ հեծեալ ոստիկաններ տուրք հաւաքելու կ'ելլեն, և նոցա որոշած տուրքը երբեմն խեղճ հողագործին ամբողջ արմտեաց հարիւրին 20ը կամ 60ը կը կազմեն։ եթէ գիւղացին չուզէ կամ չի կարենայ վճարել, ձեռքը ոտքը կը կապուռին, գլուխն ի վար ծառէ մը կը կախուի և ժամերով վրան պաղ ջուր կը թափուի։ Այս մարդկային ճիւաղներու ի գործ դրած մի ուրիշ տեսակ տանջանքն ալ սա է որ իրենց զոհին գլուխն թեփի պարկ մը կ'անցուցնեն։ Սա ամէն չունչին հետ կը պարտաւորի թեփը ծծել։ Եւ այսպէսով դորա կրած տանջանքը այնչափ շատ կ'ըլլան, որ զոհերէն շատերը այս անմարդկային գործողութեան ժամանակ կը մեռնին։

Կոստանդնուպօլսոյ Արեւելքի մէջ կը կարդամք։

«Տպագրական Տեսչութիւնն հետեւեալն հրատարակած է այս աւուր Թուրք լրագրաց մէջ։

«Կարինէն, Տրապիզոնէն, Բաղէշէն, Քարբերդէն և Սեբաստիէն նոյեմբեր 19, 20 և 21 թուականաւ եկած հեռագիրք կը ծանուցանեն թէ այդ նահանգաց մէջ եւս, չնորհիւ Վեհ. Սուլթանին, կատարեալ անդորրութիւն կը տիրէ։»

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԼՈՒՐԵՐ

—Վեհ. Սուլթանը իւր անձնական ծախիւք ի Պերլին յղած է Վսեմ. Տր. Խօրասանճեան էֆէնտի և ուրիշ մի Գերմանացի և մի Թուրք բժիշկներ, Տր. Քոխի հիւծախտի դարմանման եղանակն ուսումնասիրելու և զայն Թուրքիոյ մէջ ընդհանրացնելու համար։

—Կոստանդնուպօլսոյ քարտիսանց չինութեան արտօնութիւնն չնորհուած է Միշել Փաշայի։—Այս արտօնութիւնն տասնեհինգ տարի է ի վեր կը խնդրեր Միշէլ Փաշա։—

ՀՐԱՒԷՐ ԱՌԱՋԳԱՑԻՆՍ

Ողորմութեամբն Աստուծոյ և նուիրատուութեամբ ազգայնոց աւարտեցաւ Ուսթըրի Հայկական Եկեղեցւոյ շինութիւնն հանդերձ ժողովատեղւոյ սրահով, որոյ բացման և օծման նուիրական հանդէսը տեղի պիտի ունենայ ճիշտ Յունվար 18ին ըստ Նոր տոմարի, որ է օր Ս. Ծննդեան ըստ տօնացուցի Հայոց։ Ի գիտութիւն պատուական Հայգաղթականութեան Ամերիկայի ծանուցանելով, կ'հրաւիրեմք զամենեսին իրենց ներկայութեամբ պատուել սոյն ազգային և կրօնական ուրախարիթ տօնախմբութիւնն։

Ի Դիմաց Հոգաբարձութեան Հայկական Եկեղեցւոյ։

Մ. Պաղտիկեան, Կ. Թաշճեան,
Ատենադպիր։ Ատենապետ։

ՁՐԻ

Զոր պտուղ, պաղպաղակ, երգեր, նուագ, կենդանի, պատկեր, Յուն. 3ին, M. C. A ի 23 րդ փողոցի ճիւղին վերի սրահը ժամը 7ին երեկոյեան։

Ամեն Հայ (Տիկնայք և Տիարք) կրնան գալ առանց հրաւերի։

Ծանօթ. Խմբ։

—Ծրագիր մը մատուցուած է Դրան կառավարութեան Սարայ Պուրունի և Հայոց փաշայի միջև կախեալ կամուրջի մը շինութեան համար։

—Լա ժէօն Թիւրքի անուամբ Գաղղիարէն շաբաթաթերթ մը հրատարակել սկսած են Բարիզի մէջ, Դեկ. 1է սկսեալ, Պրնյք. Տ. Եօրկիատիս և Օկիւդ Թօմաս։ Սոյն թերթը Թուրք երիտասարդութեան բերանն պիտի ըլլայ և կ'ակնկալուի որ չի կարդացուած գլուխներ բանայ Թրքական ներկայ պատմութեան մէջ։

—Ստեփան Փաշա Ասլանեան Թրքական վարչութեան կողմանէ խստիւ հարցաքննութեան մը թէպէտ ենթարկուած էր, ուրախ եմք լսելու ու կարողացած է իւր անմեղութիւնն հաստատել։

—Կ'ըսուի թէ Տր. Թիրեաքեան 5 տարի բանտարկութեան դատապարտուած է, և կամ քիչ օրէն պիտի դատապարտուի։

—Բ. Դուռը կասկած ընելով որ Ամենապատիւ Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեան յեղափոխականները կը քաջալերէ, հրամայած է նորա յերուսաղեմ ուխտագնացութեան երթալ որպէս զի Կոստանդնուպօլսէն հեռացած ըլլայ։

—Նաթանեան Պողոս վարդապետ որ Տամասքոս աքսորուած էր, անդ չի կարենալ ապրելով վախճանած ըլլալը կիմանամք։

—Մօսկուայի մէջ Լազարէֆ ճեմարանի 75 րդ. տարեդարձի հանդեսն կատարուած է նոյեմբերի 6ին։ Ազգային սոյն նշանաւոր հաստատութեան այս մեծ հանդիսին առթիւ Հայազգի և Ռուս երեւելի Բրոֆէսորներ ընտիր ատենախօսութիւններ ըրած են։

—Ֆիլատէլֆիոյ Բիրսմէյքըր ամսաթերթի Դեկտեմբերի թուոյն մէջ, «Հայաստան և Խաղաղութիւն» վերնագրով ընտիր յօդուած մը հրատարակուած է, Մր. Ռ. Սթայնք գրչէն ելած։ Ցիշեալ թերթը կը խոստանայ այսուհետէ իւր էջերը բանալ Հայկական խնդրոյն։

—Հայկական Միութիւն մասնախումբ մը ընտրած է, այս տարի 25 Սրբոց Վարդանանց հանդէսը շքեղութեամբ կատարելու համար։

—Նիու Եօրքի և շրջակայից Հայ գաղթականութեան արտաքոյ կարգի ժողով մը ևս գումարեցաւ անցեալ Շաբաթ երեկոյ ընդ նախագահութեամբ Տր. Մ. Սթթարեանի, Խնդիրն Սթար սրահին մէջ։ Ժողովն զբաղեցաւ գաղթականութեան վերաբերեալ մի քանի ներքին խնդիրներով, և ժամը տասն և մէկին ցրուեցաւ երկու շաբաթէն վերստին գումարուելու պայմանաւ։

---

‡ Վերոյիշեալ յօդուածին բովանդակութիւնը այդ ամսաթերթի մասին մեր խորհրդածութիւնը Աբրատի յառաջիկայ թուոյն կը թողումք տեղի անձկութեան պատճառաւ։ Ծնթ. Խմբ.

---

* Պատիրարքարանի թագրիրները, զորօրինակ։ Ծնթ. Խմբ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

«Նիու Եորքի և շրջակայից Հայ Գաղթականութիւնն» ներկայացնող երեք հարիւրի չափ Հայերու, Նիու Եորք Քաղաքի Իսթըրն Սդար սրահին մէջ Դեկ. 14 ի շաբաթ գիշեր, ընդ Նախագահութեամբ Մր. Հրանդ Մ. Քրիէհճեանի, գումարած մի ժողովին մէջ, ազգու ատենախօսութիւններ եղան գաղթականութեան երեւելի անդամներու կողմանէ և հետեւեալ որոշումները միաձայնութեամբ ընդունուեցան։

Ըստ որում, այս ժողովի ուշադրութիւնն հրաւիրուած է Պոսթընի ԳՕՆԿՐԻԿԷՇԸՆԱԼԻՍԹԵՐԹԻՆ 1890 Նոյեմբեր 20 ի թուոյն մէջ «Հայկական Խնդիր» վերնագրով յօդուածի մը, որն որ Օտար Առաքմանց Ամերիկեան Պօրտ ի Միսիօնար Պատ. Հ. Ն. Պարնըմի գրչէն ծնունդ առած է. և

Ըստ որում, ենթադրական տեղեկութիւն ունեցող մեկու մը սոյն գլխովին անճիշդ և սխալ տպաւորութիւն յառաջբերող ասացուածները Հայկական խնդրոյն գոյութիւնը կ'ուրանան և կը թափանձեն Հայ ազգին կրօնին յատկութեանց և անողոքութեամբ կը յարձակին նորա վրայ. վասն որոյ,

Որոշուեցաւ, թէ Պատ. Հ. Ն. Պարնըմ, կամ կամաւորապէս այնպիսի պատճառներէ դրդեալ որոց շարժառիթները չ'եմք կրնար հասկնալ, և կամ իրաց աններելի անհասկցողութեամբ ինքզինքը ճակատ առ ճակատ հակասած է, (Ա.) Պէրլինի Վեհաժողովին մէջ հաւաքեալ Եւրոպական ամէն Տէրութեանց դէմ, որք ոչ միայն ճանչցան Հայկական Խնդիրը, այլ նաև նորա մեծ կարեւորութիւնը հաստատեցին, դաշնագրի յօդուածներուն մէջ 61 րդը աւելցնելով, նորա լուծման իրը դարման. (Բ.) քաղաքակրթեալ աշխարհի մամլոյն դէմ. և (Գ.) Մեծայարգ Ո. Ը. Կլատսթընի և Յարգապատիւ Ճէյմս Պրայսի պէս տիեզերահամբաւ քաղաքագիտաց և ազգութեանց ճանաչողներու դէմ, որք կրկին և կրկին վկայած են թէ հին Հայկեան ազգը տակաւին գործունէութեամբ կենդանի է, և նորա ապահովութեան խնդիրը Քրիստոնեայ Եւրոպիոյ աչաց առջև նուիրական է։

Որոշուեցաւ, թէ յիշեալ Պատուելի պարոնը Հայ ժողովրդեան իւրեանց մեծ տառապանաց և անկախութեան կորստեան մասին անտարբերութիւնը ապացուցանելու համար ըրած ջանքերը, ինքն իր փաստերը կը ջրէ և ճիշդ դորա հակառակ եղելութեան ճշմարիտ ըլլալը կը ցուցնէ, երբ կը խոստովանի թէ նոյն իսկ ազգին Պատրիարքը համարձակութիւն ունեցած է իր առ Թրքական կառավարութիւնն ունեցած պաշտօնէն հրաժարելու, ատով բողոքելով իր ժողովրդեան վրայ գործուած հարստահարութեանց դէմ։

Որոշուեցաւ, թէ յիշեալ պատուելի պարոնը Հայ ժողովրդեան քաղաքական կարողութիւնները նուազացնել և աշխարհիս ամէն Հայ գաղթականութեանց գործունէութեան կարեւորութիւնը փոքրացնել փորձելով, Հայ ազգին անցեալ և ներկայ պատմութեան մասին իր ունեցած ցաւալի տգիտութիւնը կը յայտնէ։

Որոշուեցաւ, թէ մեք կը զարհուրիմք տեսնելով որ Օտար Առաքմանց Ամերիկեան Պօրտի պէս մարմնոյ մը ներկայացուցիչը որ կէս դարէ ի վեր Հայ ժողովուրդը ճանաչելու ամէն պատեհութիւն ունեցած է, կը համարձակի զանոնք ակնարկելիբը «անուանական քրիստոնեայ» երբ մինչև իսկ Անգլիոյ Եկեղեցին և բոլոր աշխարհի Բողոքական—Եպիսկոպոսական եկեղեցին զՀայաստանեայց Եկեղեցին իրը քոյր Քրիստոնեայ Եկեղեցի մը կը ճանաչեն, և երբ մեր տասն և հինգ դարերու Քրիստոնեայ մարտիրոսաց պատմութիւնը Քրիստոնեայ Եկեղեցւոյն ժառանգութիւն մը եղած է. թէ մենք մեր խորին ցաւն ինչպէս նաև մեր արհամարանքը կը յայտնեմք որ սոյն յօդուածագիրը, իրը ամերիկեան Միսիօնար մը, համարձակած է այսպէս Հայաստանեայց եկեղեցւոյն բարի համբաւն անպատուել, և Արևելեան խնդրոյ լուծման համար Պօրտի օգնութիւնն խնդրելով, մեր ժողովրդեան վիշտերը ի վաճառ հանել. թէ մենք ամենայն զօրութեամբ յիշեալ յօդուածը թէ ոգւով և թէ տառով կը դատապարտեմք և շեշտելով կը յայտարարեմք թէ որև է անձ, Միսիօնար կամ այլինչ, որ այսպիսի տեսութիւններ ունի կամ կը հրատարակէ, վնասակար կերպով անպիտան է արևելեան Քրիստոնէից մէջ. և թէ այսպիսի ասացուածներ որք ժամանակէ ժամանակ Ամերիկայի կրօնական մամլոյն մէջ երևան կուգան, չեն կրնար ուրիշ կարելի արդիւնք մը ունենալ բայց եթէ Հայ ժողովրդեան առ Քրիստոնեայ Ամերիկայ ունեցած համակրութիւնն և յարգանքն գժտեցնել։

Որոշուեցաւ, թէ մեր այս բողոքը Միացեալ Նահանգաց նշանաւոր կրօնական և աշխարհական թերթերուն մէջ հրատարակութեան տամք։

ԹԷ ՈՒՐԻՇՆԵՐԸ ԻՆՉ ԿԸ ԽՈՐՀԻՆ ՄԵՐ ՎՐԱՑ։

Խմբագիր ԱՐԱՐԱՏԻ.

Նոյեմբերի վերջին աւուր վերջին բոպէներն՝ ըստ բաւականին հրապուրիչ կիւրակէի մը արեգական մելաքաղցրիկ ճառագայթներուն հետ ովկէանի ալէծփիկ ծոցին մէջ կը թաքչէին. երբ բարեկամ մը ժպտաշուրթն և ծիծաղերես ինձ կերկարէր ձեր ԱՐԱՐԱՏԻՆ խորհրդաւոր յայտագիրը։

Տխուր էի, դժբաղդաբար, դի սեռեկիս միայնութեան մէջ, թիկնաթոռիս գրկէն գրասեղանիս վերայ կքած, յուզեալ և մտախոհ, կրկին և կրկին կը վերծանէի մտերմի մը նամակն որ՝ հակառակ պանդխտիս ակնկալութեան, հայրենիքի նորանոր դժբաղդութիւններն կ'ուրուագրէր սրտաճմլիկ և արիւնահոտ տողերով։ Եւ սակայն, քանի՛օն հրճբուեցաւ հոգիս, յորժամ բաժնեցի յայտագրիդ զոյգ թերթիկներն իրեւ՝ և նորա անբիծ ճակտին վերայ կարդացի ԱՐԱՐԱՏ անունն՝ քաղցրահընչիւնն զոր թերեւս գոհ պիտի լինէի սիրել իրրեւ մեր այրիացեալ մօր, անուշիկ Հայաստանին բնոյն վերայ բուսած մի ծաղիկ, եթէ չնորհիւ նրբիմաստ տողերու գէթ համառօտ, թէև անգոհացուցիչ, գաղաբար մի չկազմէի թէ այն մի պատմական կարեւորութիւն ունի ձեզ համար, ըստ որում երջանկայիշատակ հօրդ նահատակ արեամբն երկիցս նուիրագործեալ է։ Թուլատրեցէք ինձ, ուրեմն, չնորհաւորել զձեզ սոյն ազգասիրական փառանպատակ ձեռնարկին համար, յանուն այն անձին որոյ ձայնն՝ թէև տասն և հինգ երէ՛կար տարիներ առաջ Թրքական հաւատաքննութեան ծուխին ու մուխին մէջ խեղդուած, այսօր կը գլորէ իւր գերեզմանի կապարեայ կափարիչն և վրէժխնդիրշեշտերով կուգայ ցոյց տալ հայրասէր ջերուդ և հայրենասէր զգացմանցդ։ յիշեցնելով քեզ ինչ որ սրբազան պարտականութիւնդ է։

Կը սոսկամ, սակայն, մինչ կը խորհիմ թէ մեր ժողովրդեան մեծամասնութեան անտարբերութիւնը քանի մեծ փորձանք մէ մեր խմբագրաց որք տարաբաղդաբար հատ չուտ կը գլորին յուսահատութեան փոսը իւրեանց գրիչը անդորձութեան դատապարտելով։

Բայց կը սիրեմ յուսալ, Խմբագիր Տէր, թէ գուք չպիտի լինիք ի նոցանէ. քանզի ձեր նահատակ հօր ձայնն բարձրագոյն պիտի խօսի ձեր ականջին, քաջալերելով զձեզ ընդ միշտ՝ բողոք բառնալ ընդդէմ այն յոռի քաղաքականութեան որոյ գազանային ազդեցութեանն ներքեւ թշուառ Հայը անկարող կը մընայ դարերէ հետէ արդարութիւնը անիրաւութեան, ճշմարտութիւնը ստութեան և գեղեցիկը տգեղին դէմ պաշտպանելէ։ Ցաւէրժ կեց՛ցէք որ կուգաք, սպեղանի ի ձեռին, հային, վիրաւոր և անկեալ հային խոցոտ բորոտ սիրտն բուժելու։ Մ'ի վհատիք բնաւ, եթէ երբէք քաջալերութիւն չիգտնէք իսկ։ Գրեցէք, ցորչափ գրիչ մը ունիք, զի գրչաունիդ կարող պիտի ըլլաք Եւրոպական սառնային անտարբերութիւնը, հասարակածի տօթագին կլիմային փոխարկել Հայուն կորուսեալ դատին նկատմամբ։ Գրեցէ՛ք, մինչև որ ես ու իմ հայրենակիցք, կատարելապէս համոզուինք՝ թէ Հայկական խնդրոյն բարւոք լուծմանն համար թնդանօթներու գոռումէն աւելի գրչի մոգական ճրռինչին կը կարօտինք. գրեցէք և գերեցէք մեր ազգի պաղարիւն դասուն մտքերն շարժման ոսկեվանդակին մէջ։ Գրեցէ՛ք, մինչև որ մերայինք ի բաց թողուն ատելութիւն, քէն և ոխ և ամէնքն միասիրտ և միակամ համախմբին սիրոյ և միութեան դրօշին ընդ հովանեաւ, իբրեւ մէկ մօր զաւակներ։ Ներեցէ՛ք, Տէր, որ այս անկեղծ վստահութեամբ կնքեմ նամակս և համարակիմ խնդրել ի ձեզ որ ձեր թերթի անդրանիկ ծնունդն միջոց մի լինի սոյն զգացումներս ազնիւ ընթերցողացդ ևս հաղորդելու։

Ցոյսեմ ունիմք թէ Ամերիկայի Հայ գաղթականք պիտի չը զլանան իւրեանց աջակցութիւնն թերթի մը որ կը խոստանայ պաշտպան և ջատագով կանգնիլ իւրեանց կորուսեալ դատին։ Հաճեցէք կանխաւ ընդունիլ, խմբագիր տէր, շնորհակալութիւնս, համարելով զիս բարեկամ ձեր թերթին։

Հ. Մ. ՕՆՆԻԿ

ԿԱՐԵՒՈՐ ԴԻՏԵԼԻՔ

Ամենէն լաւ խորհուրդդ գործքի վերածէ։— Մատամ Նէքքր։

—o—

Իմ գիտցած ամենամեծ հաճոյքս է բարի գործ մը ծածուկ կատարել, և ձգել որ պատահմամբ յայտնուի։— Զարլս Լէմպ։

—o—

Ամէն դիպուածի փայլուն կողմը նայելու սովորութիւնն տարեկան հազար ոսկիէ աւելի կ'արժէ։ Տէյվիտ Հիւմ։

—o—

Անխուսափելւոյն հնազանդէ, անկարելին մտքէդ վանէ, և չուրջ նայէ կենաց մէջ շահաւէտ նոր առարկայի մը համար։— ԿԷԹԷ։

—o—

Ո՛չ ոք կրնայ որևէ ընկերութեան մէջ բարւոքիլ որմէ ակնածելու չափ առ այն յարգանք չունի։— Զէսթըր Ֆիլտ։

—o—

ՔՆՈՑ ԱՐԺԷՔԸ։

Հրամանատար Լօրտ Ուըլսլի, Անգլիոյ գլխաւոր զօրականը, պարզ և պահպանողական սովորութեանց տէր անձ մի է և քնոյ ջերմ պաշտպան մը։ Երբ ինքն իւր տէրն է, ժամը տասնին և տասն և մէկին միչեւ հանգչելու կերթայ և վեցէն առաջ կ'ելնէ։ Խորունկ քնացող մը է. և որևէ ժամանակ, որևէ պարագայի մէջ կրնայ քնանալ, որ անտարակոյս յաջողութեան մեծ գաղտնիք մը է. որովհետեւ պատերազմի մէջ, ինչպէսև քաղաքագիտութեան մէջ, քնանալու անկարող մարդու մը համար աւելի լաւ է ասպարէզէն դուրս ելլել։ «Ժամանակդ աւելի օգտակար կերպով չես կրնար գործածել քան թէ քնանալով» կ'ըսէ Լօրտ Ուըլսլի, և այնպիսի ասացուած մը է որ արժան է ուշադրութեան առնուելու ամէն անխոնջ աշխատաղներու կողմանէ։ Քանի որ կրնաս քնանալ, միշտ կրնաս քու զօրութիւնդ վերանորոգել։ Քնոյ չ'գոյութենէ է որ կենայ ափանց վրայ հաւասարակշռութիւնն կը կորսուի։

—o—

ՊԷՆ ՖՌԱՆՔԼԻՆԻ ԾԵՐ ՀԱՍԱԿԻ ՄԷՋ ՈՒՆԵՑԱԾ ՓԱՓԱՔԸ։

Մենէ առաջ գացած մեծ մարդոցմէ որո՞ը այնչափ պիտի սիրէ մեր մոյորակին այցելութիւն մը տալ որչափ Տր. Բենիամին Ֆռանքլին իւր թռուցիկներով և փայլակի ցօղերով։ Եւ անշուշտ ամէն բանէ առաջ պիտի խնդրէր որ չիտակ Թովմաս Էտիսընի դրան առջև տարուի։

Ճիշդ հարիւր տարի առաջ երբ Տր. Ֆռանքլին, ելեքտրականութեան նախահայրը, ութսուն և երկու տարէկանէր, մի բարեկամի գրած էր, իրեն յատուկ եղող տղայական պարզութեամբ, թէ կուզէր որ մէկ կամ երկու դար ետքը կարենար ծընիլ։ Բսած էր. «Հիմայ չիմոռնաց շատ բարւոքումներ այդ ժամանակը չանցած յառաջ պիտի բերուին. և ես այն ատեն չէ թէ միայն ատոնց օգուտները պիտի կարենայի վայելել, այլ իմ հետաքրքրութիւնս պիտի յագենար գիտնալով թէ ատոնք ինչ բաներ պիտի ըլլան»։

"The ARARAT"

No. 100 Centre Street, New York.

ADVERTISING RATES.

Inches.	1 Month.	3 Months.	1 Year.
1	$ 2.00	$ 5.00	$16.00
2	3.50	8 00	25.00
3	5.50	11.00	35.00
4	6.00	14.00	45,00
5	7.00	17.00	55.00
6	8.00	20,00	65.00
7	9.00	23 00	75 00
8	10 00	26 00	85.00
½ Col.	11.00	29.00	95.00
1 Col.	20.00	55.00	180.00

Per Line (Agate) 20 cents each issue.

☞The above prices are for the first and last pages only. Ten per cent additional for the third page, next to reading matter.

If YOU WISH TO Advertise Anything Anywhere AT Any time

WRITE TO

GEO. P. ROWELL & Co.

No. 10 Spruce Street,

NEW YORK.

ԱԶԴ

Հ. ԷԿԻՆԵԱՆ, Հայերէն միակ Տպագրիչ, պատիւ ունի ծանուցանել թէ իւր շրջեշարժ արագատիպ մամլոյ միջոցաւ յանձն կառնէ տպագրել ամէն տեսակ Հայերէն և Անգլիարէն գործ մեծ կամ փոքր քանակութեամբ։ Տպագրութեան մաքրութիւն և ժամանութիւն կարելի չէ գերազանցել. իր Նիու Եորքի մէջ ձուլեալ տուած Հայերէն ընտիր տառերն բաւական են մեծակակ հատորներ տպագրելու։ Գիրք, տետր կամ ո՛և է տպագրելի բան ունեցող ազգայնոց ուշադրութիւնն կը հրաւիրուի այս մասին։

B. H. TASHJIAN & Co.,

100 Centre St,

New York.

BOOK AND PAMPHLET BINDERS

Cloth anb paper bindings. Magazines, Reviews and Newspapers bound and mailed. Estimates furnishe l cheerfully.

Ս. ՕՀԱՆՆԷՍԵԱՆ.

Արեւելեան և Տեղական Նպարեղէններ։

59. Վաշինկդօն և 216 Էլսրիճ Փողոց.

Mrs. Winslow's Soothing Syrup.

ՏԻԿ. ՈՒԻՆԶԼՕԻ ՈՂՈՔԻՉ ՕՇԱՐԱԿԸ։

Յիսուն տարիներէ աւելի է որ Տիկին Ուինզլօի Ողոքիչ Օշարակը միլիոնաւոր մայրերէ կը գործածուի իրենց զաւակաց ակռայ հանելու ժամանակ։ Գիշերները կը խանգարուի՞ք և հանգստութիւնդ կը վրդովո՞ւի ակռայ հանելու ցաւէ հիւանդ, տառապող և լացող զաւակէ մը։ Եթէ այդպէս է, անմիջապէս Ակռայ Հանող Մանկանց համար «Տիկին Ուինզլօի Ողոքիչ Օշարակ»էն շիշ մը առէք։ Սորա արժէքը անհամար է։ Խեղճ պզտի տառապեալին անմիջապէս դարման մը պիտի ըլլայ։ Մայրե՛ր, ասոր վրայ կրնաք ապաւինիլ. բնաւ սխալ չիկայ։ Կը բժշկէ Փորլուծութիւն, կը կանոնաւորէ Ստամոքսը և Աղիքները, կը բժշկէ Աղեաց Խիթը, կը կակղցնէ Լինտերը, կը նուազեցնէ բորբոքումն, և ամբողջ կազմուածքը կը կազդուրէ և կը զրացունէ։ Ակռայ հանող մանկանց համար «Տիկին Ուինզլօի Ողոքիչ Օշարակը, ճաշակի հաճելի, և Միացեալ Նահանգաց մէջ ամէնէն հին և ամենալաւ բժշկուհի և ռնուցիչներէն մէկուն դեղագիրն է, և կը ծախուի աշխարհիս ամէն դեղագործներու քով։ Իւրաքանչիւր շիշի գինն է քսան և հինգ սենթ։ Ուզեցէք միայն

"Mrs. Winslow's Soothing Syrup."